ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«16» ապրիլի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրով շնորհավորում եմ Ոստիկանության համակարգի բոլոր ներկայացուցիչներին՝ ապրիլի 16-ին նշվող Ոստիկանության մասնագիտական տոնի առթիվ:

Ոստիկանությունը մշտապես քաղաքացու իրավունքների պաշտպանության, հասարակական կարգի ապահովման և հանցավորության դեմ պայքարի առաջնագծում է:

Ոստիկանի ուսերին պատասխանատու առաքելություն է դրված, ոստիկանության ամբողջ համակարգով է քաղաքացին պատկերացում կազմում պետության իրավապահ համակարգի կայունության, անաչառության, պատրաստվածության մակարդակի մասին:

Առանձնահատուկ շնորհավորում եմ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ստեփանավանի բաժնի բոլոր աշխատակիցներին:

Եղե՛ք ձեր կոչմանն արժանի և հավատարիմ:

Արժանապատիվ և անփորձանք ծառայություն եմ մաղթում բոլորիդ:

Խոնարհումս հայրենիքի պաշտպանության համար անմահացած ոստիկաններին. հավե՛րժ փառք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ